

**Վարդիթեր ՀԱԿՈՐՅԱՆ**

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվահասարակագիտական համալսարան

**ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՄՊԼԻԿԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՏԵՂ  
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ  
ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Սույն հոդվածը նվիրված է քաղաքավարության իմպլիկատորայի տեսակների դրսևորումների և դրա համարեղ կառուցման բնույթի ուսումնասիրությանը պաշտոնական հարցազրույցներում:

Պաշտոնական հարցազրույցները արտացոլում են խոսողի և խոսակցի միջև առկա մեծ սոցիալական տարածությունը, ինչը ենթադրում է քաղաքավարության աստիճանի բարձրացում և պարտադրանքի նվազեցում: Այս առումով քաղաքավարության դրսևորումներն ընդգծվում են դիմելաձևի հատուկ բառերի և լեզվական միջոցների կիրառությամբ: Պաշտոնական համարեղները արտացոլում է քաղաքավարության իմպլիկատորայի տեսակների առկայացման առանձնահատկությունները, մինչդեռ քաղաքավարության իմպլիկատորայի համարեղ կառուցումն ի հայտ է գալիս հաղորդակցվող մասնակիցների ակտիվ խոսքային փոխազդեցության ընթացքում:

**Բանալի բառեր.** պաշտոնական հարցազրույց, համարեղներ, գործաբանություն, անուղղակի պահվածք, քաղաքավարության, իմպլիկատորա, մտադրություն, մասնավոր իմպլիկատորա, ընդհանրացված իմպլիկատորա

Իմպլիկատորան՝ որպես գործաբանական երևույթ, գրավեց լեզվաբանների ուշադրությունը 1967 թ. Հարվարդի համալսարանում Փ. Գրայսի կողմից դասախոսությունների մի ամբողջ շարք կարդալուց և դրան հետևած մի շարք հրապարակումներից հետո: Գործաբանության մեջ իմպլիկատորա եզրաբառը առաջադրվել է Փ. Գրայսի կողմից: Իմպլիկատորան ասույթի ենթադրվող իմաստն է, այն կարող է նախադասության իմաստի մաս կազմել կամ հետևել այն համատեքստից, որում առկայացվում է այդ նախադասությունը /Grice, 1967/:

Քաղաքավարություն և իմպլիկատորա հասկացությունները գործաբանության կարևորագույն հասկացություններից են: Մի շարք լեզվաբանների պնդմամբ՝ քաղաքավարության իմպլիկատորան ձևավորվում է մասնակիցների անուղղակի վարքագծի արդյունքում /Brown and Levinson, 1987; Leech, 1983; Haugh, 2003/: Համաձայն Ռ. Արունդելի հաղորդակցության համագործակցային կառուցողական կաղապարի՝ քաղաքավարության իմպլիկատորան առաջանում է հաղորդակցվող մասնակից-

ների քաղաքավարի փոխազդեցության ընթացքում, ինչի արդյունքում ի հայտ է գալիս քաղաքավարության իմպլիկատուրայի *համարեղ կառուցումը* /Arundale, 2005/:

Սույն երևույթը և դրա տեսակները՝ *խրախուսող քաղաքավարություն* (enhancement politeness) /Leech, 1983/, *փոխհատուցող քաղաքավարություն* (compensatory politeness) /Brown and Levinson, 1987/, *դիմացինի արժանիքները գնահատելու քաղաքավարություն* (demeanour politeness) /Leech, 1983/, պայմանական քաղաքավարություն (provisional politeness), (քաղաքավարության այս տեսակը բնորոշ է միայն հարցազրույցի ոչ պաշտոնական ոճին, որտեղ հարցազրուցավարը հավասարապես կիսվում է զրուցակցի հետ իր կարծիքով և զգացողություններով) /Haugh, 2005/, *բացասական քաղաքավարություն* (negative politeness) (այս տեսակը դրսևորվում է մասնակիցների պաշտոնական հարաբերությունների արդյունքում) /Brown and Levinson, 1987/ ձևավորվում են հաղորդակցվող մասնակիցների քաղաքավարի փոխազդեցության արդյունքում:

Չնայած Փ. Գրայսի, Ջ. Սերլի այն պնդմանը, որ այս երկու հասկացությունները սերտորեն կապված են միմյանց հետ /Grice, 1967; Searle, 1975/, չնախաձեռնվեց համապարփակ փորձ դրանց միջև գոյություն ունեցող կապը ուսումնասիրելու համար: Ինչպես պնդում են Փ. Բրաունը և Ս. Լեվինսոնը՝ քաղաքավարությունն ի հայտ է գալիս, երբ հասցեատերը փոխանցում է իր քաղաքավարի մտադրությունը մասնավոր իմպլիկատուրաների տեսքով (particularised implicature) /Brown and Levinson, 1987: 6, 95; Brown, 1995: 169/: Վերջիններիս պնդմամբ՝ քաղաքավարությունը ձևավորվում է հասցեատիրոջ քաղաքավարի մտադրությունների արդյունքում մասնավոր իմպլիկատուրաների տեսքով /Brown and Levinson, 1987: 6, 95; Brown, 1995: 169; Brown, 2001/: Քաղաքավարության սույն տեսության հիմնադիրներից են նաև Ջ. Լիչը /Leech, 2003/ և Մ. Տերկուրաֆին /Terkourafi, 2003/, ովքեր պնդում են, որ քաղաքավարությունը կարող է ձևավորվել ինչպես մասնավոր, այնպես էլ ընդհանրացված իմպլիկատուրաների տեսքով: Մ. Տերկուրաֆիի կողմից առաջադրված քաղաքավարության սկզբունքի հիմքում ընկած է այն դրույթը, որ քաղաքավարությունը կարող է ձևավորվել ինչպես կոնկրետ, այնպես էլ ընդհանուր իմպլիկատուրաների տեսքով /Terkourafi, 2003, 2005/:

Ջ. Լիչը առանձնացնում է քաղաքավարության հետևյալ սկզբունքները՝ եղիր քաղաքավարի, նրբանկատ, մեծահոգի, գովաբանող, համեստ, հաշտ և կարեկցող /Leech, 2005: 17–18/: Օրինակ՝ երբ հյուրին առաջարկում ենք որևէ բան խմել, ավելի քաղաքավարի է ասել “What would you like to drink?” (Ի՞նչ կցանկանաիք խմել), ինչը, համաձայն Լիչի՝ պարունակում է քաղաքավարություն՝ մեծահոգության սկզբունքի համաձայն:

Քաղաքավարության սկզբունքը համընդհանուր է մարդկային հաղորդակցության համար, ինչը թույլ է տալիս խուսափել հաղորդակցական անհամաձայնությունից: Հարկ է նշել, որ համաձայնության հնարա-

վոր է հասնել միայն այն դեպքում, երբ մասնակիցները հետապնդում են միևնույն նպատակները երկխոսության ընթացքում /Leech, 2005: 7/: Ելնելով այս ամենից՝ Լիչը սահմանում է քաղաքավարությունը հետևյալ կերպ. քաղաքավարությունը ձևավորվում է, երբ մասնակիցը մեծ կարևորություն է տալիս այն ամենին, ինչը վերաբերում է լսողին, այլ ոչ իր սեփական անձին /Leech, 2005: 13/:

Ա. Կալիան պնդում է, որ քաղաքավարությունը ձևավորվում է ճիշտ այնպես, ինչպես մասնավոր խոսքային իմպլիկատուրաները քաղաքավարության և համագործակցային սկզբունքի արդյունքում /Kallia, 2004: 145/: Կալիան առաջադրում է քաղաքավարության հետևյալ ձևակերպումը՝ «Եղեք պատշաճ և՛ ձևի, և՛ բովանդակության մեջ».

- Ենթասկզբունք 1՝ Մի եղիր սպասվածից ավելի քաղաքավարի,
- Ենթասկզբունք 2՝ Մի եղիր սպասվածից ավելի քիչ քաղաքավարի /Kallia, 2004: 161/:

Քաղաքավարության մեկ այլ՝ ավելի ընդլայնված մոտեցում է առաջադրում Մ. Տերկուրաֆին /Terkourafi, 2005: 237/: Նրա պնդմամբ՝ քաղաքավարությունը ձևավորվում է խոսողական-ներգործական փոխազդեցության արդյունքում: Կալիայի քաղաքավարության տեսության տարբերությունը Տերկուրաֆիի առաջադրած քաղաքավարության տեսությունից այն է, որ Կալիայի պնդմամբ՝ քաղաքավարության ձևավորումը կախված է խոսողի մտադրությունների իրազեկությունից, մինչդեռ Տերկուրաֆին պնդում է, որ քաղաքավարության իմպլիկատուրայի ձևավորումը կախված է խոսողի մտադրությունների իրազեկությունից միայն կոնկրետ համատեքստում:

Քաղաքավարության տեսության մեկ այլ մեկնաբանություն հիմնվում է այն դրույթի վրա, որ քաղաքավարությունն ակնկալվում է խոսողի կողմից այն դեպքում, երբ վերջինս չի ցուցաբերում բարձր կարծիք իր մասին: Մյուս կողմից, քաղաքավարությունը ենթադրվում է, երբ հասցեատերը չի ակնկալում, որ խոսողը բարձր կարծիքի է հասցեատիրոջ և ոչ իր սեփական անձի մասին /Haugh, 2003/:

Հարկ է նշել, որ քաղաքավարության սկզբունքները կարող են իրականացվել տարբեր լեզվական միջոցներով: Հետևյալ օրինակում այն դրսևորվում է բառային միջոցով. *“Could you lend me your electric drill?”* նախադասությունն ավելի քաղաքավարի ձև է, քան *“Could I borrow your electric drill?”* նախադասությունը /Кожанова, 2009: 249/:

Խոսելով քաղաքավարության սկզբունքի մասին՝ Տ. Օգանեզովան նշում է, որ հաղորդակցման սուբյեկտը ոչ միշտ է կարողանում արտահայտել իր սեփական մտքերն ու ցանկությունները կամ զրուցակցի հանդեպ ունեցած իր պահանջները: Զրուցակիցը ձգտում է հասնել մաքսիմալ արդյունավետության հաղորդակցման ընթացքում, ինչի

արդյունքում նա չի կարողանում ուղղակի կերպով արտահայտել իր մտքերը /Оганезова, 2011: 187/:

Ըստ S. Ֆուրմենկովայի՝ քաղաքավարությունն այն սոցիալական երևույթներից է, որի շնորհիվ միջանձնային հաղորդակցությունը դառնում է հարթ, արդյունավետ և առանց կոնֆլիկտների /Фурменкова, 2005: 10/:

Հարկ է նշել, որ քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման բնույթը հիմնվում է Ռ. Արունդելի հաղորդակցության համագործակցային կառուցողական կաղապարի վրա /Arundale, 1999/։ Համաձայն Արունդելի հաղորդակցության համագործակցային կառուցողական կաղապարի՝ քաղաքավարության իմպլիկատորան առաջանում է հաղորդակցվող մասնակիցների քաղաքավարի փոխազդեցության ընթացքում, ինչի արդյունքում ի հայտ է գալիս քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցումը։ Հետևապես, քաղաքավարության իմպլիկատորան ի հայտ է գալիս մասնակիցների ակտիվ խոսքի փոխանակման ընթացքում։ Այսպիսով, քաղաքավարության իմպլիկատորան հիմնվում է այն դիտարկման վրա, որ ինչ որ բան ակնարկելու արդյունքում ձևավորվում է քաղաքավարություն /Brown and Levinson, 1987; Leech, 1983; Haugh, 2002/:

Ալփմ դիտարկենք ԱՄՆ նախկին նախագահ Բարաք Օբամայի հետ պաշտոնական հարցազրույցի մի հատված, հյուսիսամերիկյան խմբագիր Ջոն Սոփելի հետ, որտեղ բազահայտվում են քաղաքավարության իմպլիկատորայի տեսակների դրևորումները, ինչպես նաև քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցումը պաշտոնական երկխոսության ընթացքում.

*SOPEL: “Mr. President, you're about to fly to Kenya, to your ancestral home. Given the al-Shabaab attacks on the West Gate mall and Garissa University, I'm sure your secret service could've suggested other countries for you to visit. But you wanted to go to Kenya”.*

Ակնհայտ է, որ Սոփելն արտահայտում է իր բարձր կարծիքը նախագահի մասին՝ ձևավորելով *խրախուսող քաղաքավարություն*. “Given the al-Shabaab attacks on the West Gate mall and Garissa University, I'm sure your secret service could've suggested other countries for you to visit. But you wanted to go to Kenya”:

Վերլուծենք հետևյալ հատվածը, որտեղ նախագահի բառերը պարունակում են իմպլիկատորա այն մասին, որ նա առաջին նախագահն է, ով պայքարում է ազգերի և ժողովուրդների անհամախմբվածության դեմ։ Օբամայի բառերը հիմք են դառնում նաև *խրախուսող քաղաքավարության*, երբ նախագահն արտահայտում է իր հարգանքը Քենիայի և Էթիոպիայի մասին. “So I'll be the first US president to not only visit Kenya and Ethiopia, but also to address the continent as a whole, building off

*the African summit that we did here which was historic and has, I think, deepened the kinds of already strong relationships that we have across the continent”:*

Վերլուծենք հետևյալ հատվածը, որտեղ նախագահի խոսքը հիմք է դառնում մեկից ավել քաղաքավարության իմպլիկատորայի տեսակների.

*“The more we can encourage entrepreneurship, particularly for young people, the more they have hope. Now that requires some reforms in these governments that we continue to emphasise. Rooting out corruption, increased transparency and how government operates, making sure that regulations are not designed just to advantage elites, but are allowing people who have a good idea to get out there and get things done”.*

Ակնհայտորեն, Օբաման արտահայտում է իր մեծ հարգանքը երիտասարդների վերաբերյալ և ձևավորում է *խրախուսող քաղաքավարություն*: Նախագահի խոսքից պարզ է դառնում, որ վերջինս արտահայտում է իր մեծ հարգանքը հասարակ ամերիկացու նկատմամբ՝ ցույց տալով, որ բարձր կարծիքի չէ իր մասին չնայած իր բարձր սոցիալական դիրքին: Այսպիսով, Օբաման ձևավորում է *դիմացինի արժանիքները գնահատելու քաղաքավարություն*:

Դիտարկենք հետևյալ հատվածը, որը հիմք է դառնում իմպլիկատորաների և փոխհատուցող քաղաքավարության ձևավորման համար.

1. SOPEL: *Well, haven't the Chinese got there first in Africa? You're going to go to the African Union Building, which was built with Chinese money, you're going to travel along Chinese-built roads, you're going to go past endless Chinese traders on those roads.*

2. OBAMA: *Well, the - what is true is that China has - over the last several years, because of the surplus that they've accumulated in global trade and the fact that they're not accountable to their constituencies, have been able to funnel an awful lot of money into Africa, basically in exchange for raw materials that are being extracted from Africa.*

*And what is certainly true is that the United States has to have a presence to promote the values that we care about. We welcome Chinese aid into Africa. I think we think that's a good thing. We don't want to discourage it.*

Ինչպես պարզ է դառնում Սոփելի 1-ին մուտքից, ժխտական հարցական օժանդակի կիրառությունից հետևում է այն իմպլիկատորան, որ նա ոչ թե հարց է ուղղում նախագահին, այլ արտահայտում է իր կարծիքը. *“Well, haven't the Chinese got there first in Africa?”:*

Այնուհետև, Օբամայի 2-րդ մուտքից ակնհայտ է դառնում, որ իմպլիկատորան ճիշտ է ընկալվել Օբամայի կողմից, քանի որ նախագահը նշում է այն փաստը, որ Չինաստանի ներդրումները Աֆրիկայում կատարվել են փոխանակման հիմքի վրա. *“Well, the - what is true is that China has - over the last several years, because of the surplus that they've accumulated in global trade and the fact that they're not accountable to their*

*constituencies, have been able to funnel an awful lot of money into Africa, basically in exchange for raw materials that are being extracted from Africa”:*

Նախագահը ողջունում է Չինաստանի տրամադրած օգնությունը Աֆրիկայում՝ կիրառելով *“I think we think”* կառույցը, որն, անշուշտ, անորոշություն է փոխանցում իր կարծիքին. *“I think we think that's a good thing”*: Ակնհայտորեն, *“We don't want to discourage it”* նախադասությունից ևս մեկ անգամ ի հայտ է գալիս այն իմպլիկատորան, որ նախագահը հավանություն չի տալիս Չինաստանի այդ քայլին և ողջունում է նրանց ընդամենը չհիասթափեցնելու համար՝ քաղաքավարությունից դրդված: Նախագահն այնուամենայնիվ իր հարգանքն է արտահայտում Չինաստանի հանդեպ և ձևավորում է *փոխհարուցող քաղաքավարություն*:

Դիտարկենք հետևյալ հատվածը, որը պարունակում է իմպլիկատորաններ, այդ թվում՝ քաղաքավարության իմպլիկատորաններ.

1. *SOPEL: I'm going to suggest there may be one other difficult issue when you're there. And that's the issue of homosexuality, gay marriage, after the Supreme Court ruling. I mean, the deputy president in Kenya, who you're going to meet, Mr Ruto, he said - "We have heard that in the US they have allowed gay relations and other dirty things."*

2. *OBAMA: Yeah. Well, I disagree with him on that, don't I? And I've had this experience before when we've visited Senegal in my last trip to Africa. But in a press conference, I was very blunt about my belief that everybody deserves fair treatment, equal treatment in the eyes of the law and the state. And that includes gays, lesbians, transgender persons. I am not a fan of discrimination and bullying of anybody on the basis of race, on the basis of religion, on the basis of sexual orientation or gender. And I think that this is actually part and parcel of the agenda that's also going to be front and centre, and that is how are we treating women and girls.*

Ակնհայտ է, որ Սոփելը խոսում է քննարկվելիք խնդիրների մասին Քենիայում *“may”* մոդալ բայի կիրառության միջոցով, ինչը նվազեցնում է կարծիքի սաստկությունը և հիմք է դառնում *քաղաքավարության*: Սա, անշուշտ, ընդգծում է Սոփելի և Օբամայի պաշտոնական հարաբերությունները: Հարկ է նշել, որ իմպլիկատորան չէր ձևավորվի *“is”* օժանդակ բայի նախընտրության դեպքում:

Ինչպես պարզ է դառնում, Սոփելը մեջբերում է փոխնախագահ պարոն Ռութոյի խոսքերը ԱՄՆ-ում տիրող իրավիճակի և օրենքների մասին, որտեղ նկատում ենք *“they”* հոգնակի դերանվան կիրառությունը: Ակնհայտորեն, հոգնակի դերանվան դիտավորյալ կիրառությունը հասցեագրված է նախագահ Օբամային: Այսպիսով, դերանվան կիրառությունը թույլ է տալիս նվազեցնել պարոն Ռութոյի կարծիքի սաստկությունը և հիմք է դառնում *բացասական քաղաքավարության*. *“I mean, the deputy president in Kenya, who you're going to meet, Mr Ruto, he said - "We have heard that in the US they have allowed gay relations and other dirty things”:*

Ակնհայտորեն, Սոփելի խոսքից ձևավորված իմպլիկատորան ճիշտ է ընկալվում Օբամայի կողմից, քանի որ վերջինս 2-րդ մուտքում կիրառում է անջատական՝ “don't I” հարցը, որը պարունակում է իմպլիկատորան այն մասին, որ նախագահ Օբաման համաձայն չէ պարոն Ռությի քննադատական կարծիքի հետ. “Well, I disagree with him on that, don't I?": Օբամայի խոսքից հետևում է այն իմպլիկատորան, որ վերջինս անհիմն է համարում պարոն Ռությի քննադատությունը՝ մեկնաբանելով, որ բոլորն այդ թվում և փոքրամասնությունները պետք է ունենան հավասար իրավունքներ, և հենց այդ նույն մարտավարությամբ է նա առաջնորդվում թույլ սեռի ներկայացուցիչների հարցում: Նախագահը մեծ կարևորություն է տալիս կանանց իրավունքների պաշտպանության խնդրին, ինչը ենթադրվում է շրջման կիրառությունից, որտեղ օժանդակ բայը դրվում է ենթակայի առաջ. “and that is how how are we treating women and girls”:

Վերլուծենք հետևյալ հատվածը, որտեղ հարցազրուցավարը քաղաքավարի թույլատվություն է փորձում ստանալ “can” մոդալ բայի կիրառության միջոցով, ինչը բնորոշում է հարցազրույցի պաշտոնական բնույթը: Այսպիսով, Սոփելը թույլտվություն է հարցնում նախագահից անցնելու հաջորդ թեմային՝ ստանալով վերջինիս համաձայնությունը:

1. SOPEL: *Can we just move from difficult conversations that you're about to have in Kenya and the excruciatingly difficult conversations that you had in getting the Iran nuclear deal? I'm sure some people would say that yes, you've set out the case where there is no pathway to a nuclear bomb now for Iran.*

2. OBAMA: *Yes.*

Դիտարկենք հետևյալ հատվածը, որտեղ ձևավորվում են իմպլիկատորաններ, ինչպես նաև ի հայտ է գալիս քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցումը.

1. SOPEL: *You talk about the 2% defence spending in Britain. I'm right in thinking that there was quite a bit of pressure put on from here, saying it would be very bad if you didn't.*

2. OBAMA: *I wouldn't say pressure. I think I had an honest conversation with David that Great Britain has always been our best partner. Well, you know, I guess you could go back to 1812 and that would you know, that*

3. SOPEL: *When we tried to burn this place down?*

4. OBAMA: *Yeah, right, right. But that's ancient history*

5. SOPEL: *History.*

Ակնհայտ է դառնում, որ Սոփելի հարցից հետևում է այն իմպլիկատորան, թե ինչպիսին է նախագահի արձագանքը և մեկնաբանությունը Բրիտանիայի վարչապետ Դևիդ Քեմերոնի լարված դիրքորոշման վերաբերյալ: Ինչպես նկատում ենք, Սոփելը նախընտրում է իրականությունը ներկայացնել անդեմ ձևով՝ հնարավորություն տալով նախագահին անդրադառնալ կամ չանդրադառնալ իր և Քեմերոնի լարված հարաբե-

րություններին: Անշուշտ, Սոփելը ձևավորում է *քաղաքական քաղաքավարություն*:

Ակնհայտորեն, 2-րդ մուտքում նախագահի խոսքից պարզ է դառնում, որ իմպլիկատորան ճիշտ է ընկալվել Օբամայի կողմից, քանի որ վերջինս մեկնաբանում է Քեմերոնի դիրքորոշումը: Ուշադրության է արժանի այն, որ նախագահը փորձում է չհամաձայնել Սոփելի այն մտքի հետ, որ իրավիճակը լարված է “*would*” օժանդակ բայի օգնությամբ: Ակնհայտորեն, Օբաման ձևավորում է *քաղաքավարություն*. “*I wouldn't say pressure*”: Նախագահի բառերից ձևավորվում է մեկ այլ իմպլիկատորան այն մասին, որ նախագահը Քեմերոնին չի համարում լավ գործընկեր՝ ի տարբերություն Մեծ Բրիտանիայի: Ինչպես նկատում ենք, նախագահը դիմում է Բրիտանիայի վարչապետին անվամբ, ինչը պարունակում է իմպլիկատորան այն մասին, որ նախագահն անլուրջ է վերաբերում Քեմերոնին. “*I think I had an honest conversation with David that Great Britain has always been our best partner*”:

Միաժամանակ նախագահը ձևավորում է *փոխհատուցող քաղաքավարություն*՝ արտահայտելով իր բարձր կարծիքը Մեծ Բրիտանիայի մասին՝ չնայած նրան, որ Օբաման իր խոսքում ակնարկում է 1812-ի աններելի դեպքերի մասին. “*Great Britain has always been our best partner. Well, you know, I guess you could go back to 1812 and that would you know, that*”: Ինչպես նկատում ենք, նախագահն անուղղակի կերպով է անդրադառնում այդ դեպքերին, որտեղ ուշադրության են արժանի “*could*” մոդալ բայի անցյալ ձևը և “*would*” անցյալ պայմանականի կիրառությունը: Այս կերպ նախագահը ձևավորում է *քաղաքավարություն*:

3-րդ մուտքից պարզ է դառնում, որ նախագահի խոսքից ձևավորված իմպլիկատորան ճիշտ է ընկալվում Սոփելի կողմից, քանի որ նա նշում է բրիտանացիների՝ Սպիտակ Տունը այրելու փորձի մասին: 4-րդ մուտքից ևս մեկ անգամ ակնհայտ է դառնում, որ իմպլիկատորան ճիշտ է ընկալվում, քանի որ հաստատելով Սոփելի խոսքերը՝ Օբաման ձևավորում է մեկ այլ *քաղաքավարության իմպլիկատորան*՝ վերագրելով այդ իրադարձությունները անցյալին. “*but that's ancient history*”: Այնուհետև, 5-րդ մուտքից պարզ է դառնում, որ *քաղաքավարության իմպլիկատորան համարելը կառուցված է*, քանի որ Սոփելը չի վերագրում այդ ամենը անցյալին՝ համարելով դա կարևորագույն պատմական փաստ:

Դիտարկենք հետևյալ հատվածը, որտեղ, պաշտոնական հարաբերություններից ելնելով, հարցազրուցավարը փորձում է ակնարկել նախագահին, որ անհարմար է զգում ուղղել տվյալ հարցը և միայն երկխոսության ընթացքում ի հայտ է գալիս *քաղաքավարության իմպլիկատորանի համարելը կառուցումը*.

1. *SOPEL: Except that you've kind of got this deal, you've got Cuba, diplomatic relations, healthcare reform embedded, major trade deal with Asia. It's not a question of journalist.*



2. OBAMA: *Climate change agenda with China.*
3. SOPEL: *Okay, so it's not*
4. OBAMA: *I've got a pretty long list.*
5. SOPEL: *Okay, so it's not a question that a journalist often asks, what's gone right?*

Ակնհայտորեն, Սոփելը նշում է նախագահի ներգրավվածության մասին մի շարք նախագծերում, որն ուղեկցվում է հերթական հարցի անուղղակի թույլտվությամբ: Այս կերպ, Սոփելը ցույց է տալիս, որ անհարմար է զգում ուղղել այդ հարցը, սակայն ստիպված է դա անել հարցազրուցավարի՝ իր դերից ելնելով: Այսպիսով, Սոփելը ձևավորում է քաղաքավարության իմպլիկատորա. *“Except that you've kind of got this deal, you've got Cuba, diplomatic relations, healthcare reform embedded, major trade deal with Asia. It's not a question of journalist”*:

Ակնհայտորեն, նախագահն ընկալում է Սոփելի հարցի իմպլիկատորան՝ հարցի անցանկալի լինելու մասին, այնուամենայնիվ, Օբաման չի փորձում շրջանցել ենթադրվող հարցը՝ ժամանակ տալով Սոփելին ուղղել ենթադրվող հարցը. *“Climate change agenda with China”*:

3-րդ մուտքում Սոփելը, չստանալով նախագահից մերժման ակնարկ, նորից փորձում է հայցել նախագահի ներողամտությունը և վերջնականապես համոզվել, որ նա չի ցանկանում փոխել թեման և հետո միայն ուղղել իր հարցը. *“Okay, so it's not”*:

4-րդ մուտքում, նախագահը չի փորձում թեման փոխելու մասին ակնարկ անել՝ ազատություն տալով Սոփելին ուղղել այն, եթե ցանկանում է. *“I've got a pretty long list”*:

5-րդ մուտքում Սոփելը, վերջնականապես համոզվելով, որ նախագահը դեմ չէ ենթադրվող հարցին, վերջապես Օբամային ուղղում է հարցը. *“Okay, so it's not a question that a journalist often asks, what's gone right?”*: Այսպիսով, կարող ենք նշել, որ քաղաքավարության իմպլիկատորան համատեղ կառուցված է, քանի որ նախագահն, ընկալելով Սոփելի քաղաքավարի ակնարկը, նրան հնարավորություն է տալիս ուղղել հարցը՝ չնայած հարցի ենթադրվող անցանկալի բովանդակությանը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ քաղաքավարության իմպլիկատորան գործաբանության նորագույն հասկացություններից է, որն ի հայտ է գալիս հաղորդակցվող մասնակիցների անուղղակի պահվածքից: Քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման բնույթը ի հայտ է գալիս հաղորդակցական հոսքի ընթացքում՝ կախված տարբեր արտալեզվական գործոններից:

## REFERENCE

1. Arundale R. Pragmatics, Conversational Implicature and Conversation // *Handbook of Language and Social Interaction*, NJ: Lawrence Erlbaum Associates Publishers, 2005.
2. Arundale R. An Alternative Model and Ideology of Communication for an Alternative to Politeness Theory // *Pragmatics*, N 9, 1999.
3. Brown P., Levinson S. Politeness. Some Universals in Language Usage. Cambridge: Cambridge University Press, 1987.
4. Brown P. Politeness Strategies and the Attribution of Intentions: the Case of Tzeltal Irony // *Social Intelligence and Interaction*, Cambridge: Cambridge University Press, 1995.
5. Grice P. *Studies in the Way of Words*, Cambridge, Massachusetts: Harvard University Press, 1967.
6. Kallia A. Linguistic politeness: The Implicature Approach // *Multilingua* 23, 2004.
7. Haugh M. The Intuitive Basis of Implicature: Relevance Theoretic Implicitness versus Gricean implying // *Pragmatics*, N 12, 2002.
8. Haugh M. Anticipated versus Inferred Politeness // *Multilingua*, N 22, 2003.
9. Haugh M. The importance of 'Place' in Japanese Politeness: Implications for Cross-Cultural and Intercultural Analyses // *Intercultural Pragmatics*, 2-1, 2005.
10. Leech G. *Principles of Pragmatics*. London: Longman, 1983.
11. Leech G. Towards an Anatomy of Politeness in Communication // *International Journal of Pragmatics*, N 14, 2003.
12. Leech G. Politeness: Is There an East-West Divide? // *Journal of Foreign Languages* (Shanghai International Studies University), N 6, 2005.
13. Searle J. *Indirect Speech Acts* // *Syntax and Semantics*, vol. 3, New York: Academic Press, 1975.
14. Terkourafi M. Generalised and Particularised Implicatures of linguistic politeness // *Perspectives on Dialogue in the New Millennium*, Amsterdam: John Benjamins, 2003.
15. Terkourafi M. Beyond the Micro-level in Politeness Research // *Journal of Politeness Research*, N 1, 2005.
16. Кожанова А. В. Концепции языковой вежливости (краткий теоретический обзор Вестник МГЛУ. Выпуск 557, 2009.
17. Оганезова Т. С. Причины имплицирования информации в процессе коммуникации // *Вестник Ленинградского государственного университета им. А. С. Пушкина*, 2011.
18. Фурменкова Т. В. Средства реализации принципа вежливости в американском варианте современного английского языка (на примере речевых актов общения, просьбы, приветствия). Калининград, 2005.

**В. АКОПЯН – О формировании импликатуры вежливости и ее представлении в официальных интервью.** – Цель статьи – исследовать характер и свойства импликатуры вежливости в официальных интервью. Импликатура вежливости – это сравнительно новая концепция в области прагматики. Для достижения успешной коммуникации интерактантам необходимо использовать определенные стратегии, позволяющие создать максимально комфортные условия общения. В целом, при анализе материала, в статье рассматриваются особенности формирования импликатуры вежливости, способы ее проявления, а также лексические и синтаксические средства, которыми выражается вежливость в официальных интервью.

**Ключевые слова:** официальное интервью, контекст, прагматика, не прямое поведение, импликатура вежливости, намерение, частная импликация, обобщенная импликация

**V. HAKOBYAN – On the Co-Constitutive Nature of Politeness Implicature and its Reflection in Formal Interviews.** – The paper analyses the nature of politeness implicature in formal interviews. Politeness implicature is a comparatively new concept in the field of pragmatics. Notably, politeness arises by virtue of implying something from the interaction of participants in particular contexts to maintain desired social relationships. Overall, the analysis carried out reveal the co-constitutive nature of politeness implicature, the ways of its manifestation, as well as the lexical, syntactic means which trigger politeness implicatures in official interviews.

**Key words:** formal interview, context, pragmatics, indirect behavior, politeness implicature, intention, particularized implicature, generalized implicature